



#### 120. ԿՆԿԱՑ ԽԱՐՈՒԿ

Ժուկով-ժամանակով Սողոմոնն Իմաստունին կռապաշտ կնիկ մեկեր: Էդ կնիկ դրեց վրը Սողոմոնին, թե՛ իլլայի թերրե բերդ մը շինել կիտաս, օր նստիմ մեջ, սեր էնիմ, խնդանամ...

Սողոմոնն խաբվավ ուր կնկաց, էմր էրեց, օր ախշարք ինչ խըդար հավք կա, քոմին գան, զուրանց թեբըրներ թափին, օր կնկա յուղած բերդ շինել տա:

Յրմնուց չառեջ գիշերհավուկն էկավ, էլ սաբը շէրեց, օր հավքեր չըմեն քոմին, զուր թեբըրներ թափեց, գնաց, էնոքի հարի էսօր թեբուր շկա գիշերհավուկին:

Հավքեր չըմեն քոման էկան, մնաց քոռ կունդոն: Յանգըցավ, շատ չանգըցավ, սորա էկավ: Սողոմոնն շատ հեոստտավ վըր կունդոյին:

— Թագավոր ապրած կենա,— ըսեց կունդոն,— ծանդըր հաշվու մեջ ենք, էնոքի չանգըցա:

— Դու ի՞նչ իս, օր քու հաշիվն ի՞նչ էղնի:

— Դե, ես լե իմ գորա հաշիվ ունիմ:

— Ի՞նչ հաշիվ:

— Հաշիվ կէնենք, թե օրական մեոնողն է շատ, թե՞ ծնվող:

— Մնվողներ շա՛տ ին,— ըսեց Սողոմոնն:

— Չէ՛,— ըսեց կունդոն,— օրթե կնկա խաբուկներ լե հաշիվ էնինք, մեոնողներ շատ ին...

— Կնկա խաբուկ ո՞րն է,— հարցուց Սողոմոնն:

— Ըշթե կնկա խաբուկ մը լե դո՛ւ իս:

— Ի՞մար,  
— Հսկա հավքու թեբրից ըսկի բերդ կը շինվի՞... Կնկա խարուկ  
չիս, ի՞նչ իս...  
Սողսմոն մտածեց՝ տեսավ, որ կունդոն օդորդ էր, հրաման  
էրեց էրկրի հավքեր յըմեն թռան գացին հըտ ուրանց էրամին:

